



ՈՒՆՔԻՆ ԿՍՄՈՋԻՍՏԻՆ ԵԿԵՂԵՑՈՒԿԱՆ ԺՈՂՈՎՐԸ

1945 թ. հունիսի 16-ին Ս. Էջմիածնում գումարվելու է Համազգային Եկեղեցական ժողովը:

Համազգային Եկեղեցական ժողովը հայոց եկեղեցու գերագույն օրգանն է:

Հունիսի 16-ին գումարվելիք Համազգային Եկեղեցական ժողովը դրազվելու է Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությամբ, ինչպես և մի շարք եկեղեցական կարեւոր հարցերի ճանարկմամբ ու լուծմամբ:

Համազգային Եկեղեցական ժողովը գումարվում է համաշխարհային երկրորդ պատերազմի պատմական այնպիսի ժամանակաշրջանում, երբ մեր Մեծ Միության և դաշնակից պետութիւնների միահամուռ ջանքերով ջակջակվում է Ֆաշիզմի աշխարհավեր ուժը և Ֆաշիզմը խաղաղ ջրնջվում աշխարհի երեսից:

Փաշիզմը սպիտակաթիւններ ու մահ սպիտակում ամբողջ աշխարհում, խախտեց բոլոր ազատասիր ժողովուրդների խաղաղ աշխատանքի ընթացքը, սպիտակ մեր շեն քաղաքները, պղծեց դարասլուր սրբութիւնները, կործանեց և հողին հավասարեցրեց պատմական կոթողները, գիտութեան ու արվեստի հիմնարկը հուշարձանները:

Փաշիզմը դրեց իր ահալոր բուռնցքը ժողովուրդների մաշի ու հոգու վրա, անարգեց եկեղեցիները, վանքերը, տաճարները, ծաղրեց ժողովուրդների ազգային նվիրական զգացմունքները, տանջեց ու ւլկեց բոլորապիտր հավատացյալների և եկեղեցու բազմաթիւ ներկայացուցիչների:

Նվ այսօր, երբ Ֆաշիզմի զնդանից ազատագրվել են բազմաթիւ ժողովուրդներ և շարունակում են ազատագրվել ուրիշ-

ները, դրանց առաջ բացված են ստեղծագործ աշխատանքի լայնարձակ հորիզոններ և փայլուն հեռանկարներ: Այդ ստեղծագործ աշխատանքներից անմասն չի կարող մնալ հայ եկեղեցին և հավատացյալը, որը իր հոգեթական և բարոյական վերմ արկացութեամբ օժանդակել է և շարունակում է օժանդակել Ֆաշիզմի ոչնչացմանը:

Փաշիզմի բռնութեան կապանքներից ազատագրված ժողովուրդները լծվում են ստեղծագործ աշխատանքի, միջնադարյան խավարի անարգ ներկայացուցիչների թողած մոխրակույտերի միջից, որպես մի փլունիկ, վերստին փթթում է ժողովուրդների ազատ ու խաղաղ կյանքը:

Հայոց եկեղեցին, որ հնարավորութեամբ է ստանում գումարելու իր գերագույն օրգանը՝ Համազգային Եկեղեցական ժողովը պատմական այսպիսի նշանակալից օրերում, անտարակույտ, շտրհապարտ է Սովետական Իշխանութեան:

Ս. Էջմիածնում գումարվելիք Համազգային Եկեղեցական ժողովի առաջ դրված են և իրենց լուծմանն են սպասում մի շարք լուրջ խնդիրներ, որոնք ծնունդ են առել հայ եկեղեցական կյանքում:

Համազգային Եկեղեցական ժողովի օրակարգում դրված հարցերի մեջ առաջնակարգ և կենտրոնական նշանակութեամբ ունեն Ամենայն Հայոց Կաթողիկոսի և նրա տեղակալի ընտրութեամբ, հոգեւոր ճեմարանի բացումն ու պահպանումը, հայոց եկեղեցու սահմանադրութեան վավերացումը, Ս. Էջմիածնի և նրան ենթակա հաստատութիւնների պահպանութեամբ և ապահովումը, Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հիմնական վերանորոգութեամբ և այլն:

ինչպես տեսնում ենք, Համադրային Եկեղեցական Ժողովի օրակարգում դրված հարցերը հրատարակ են ու կարող շուտափույթ լուծման: Նրա օրակարգը ինքնին վերջում է, որ Համադրային Եկեղեցական Ժողովը կաշխած է Հայաստանյայց եկեղեցին բարեկարգելու, Մայր Աթոռը էլ ավելի ծաղկեցնելու:

Ս. Էջմիածնի Մայր Աթոռը դարերից է վեր եղել է համայն հայության խոչորադույն հողերը—կրոնական օջախը, նրա հոգևոր կյանքի կենտրոնակ աղբյուրը: Ս. Էջմիածինը եղել է սիրված, փարվարված և դուրսդուրված նվիրական սրբավայրը: Այդ է պատճառը, որ հավատացյալ հայը, ուր որ էլ նա լինի, իր հայացքն ուղղում է Ս. Էջմիածնին և Մայր Հայրենիքին, ոգևորվում, ապրում և շնչում է նրանով:

Ս. Էջմիածինը խոչոր դեր է կատարել պատմական անցյալում, հետևել է վառ և անշեջ պահելու հայ հավատացյալների միասնության ջանքը, համառ կերպով պայքարել է հայրենասիրությամբ ու վառ կարոտով զինելու ի սխյուռն աշխարհի հայ համայնքներին և նրանց զերծ պահելու ամեն տեսակ տարածերթ աղեղնություններից: Ս. Էջմիածինը նրանց մեջ բորբոքել է ազնիվ սեր դեպի Մայր Հայրենիքն ու Ս. Աթոռը: Եվ նա հասել է իր նպատակին: Սակայն Ս. Էջմիածինը և Սմենյայն Հայոց կաթողիկոսությունը դեռևս շատ անկիթներ ունեն, նամանավանդ Հայրենիքից դուրս դռնվող հայ համայնքներին մեջ:

Հայրենիքի կարոտն իրենց սրբի մեջ, նրա ձայնը իրենց սկանջներում, Մայր հայրենիքից դուրս ապրող հայը կարիք է դրում մայրական դուրբուրանքի, հայրենական խոսքի, սնկաշառ և ազնիվ դրոճի, ինչպես կրոնական-եկեղեցական բնագավառում, նույնպես և կրթական-կուլտուրական սպարեզում: Ահա թե ինչո՞ւ նրա հայացքը շարունակ ուղղված է դեպի Ս. Էջմիածինը և Մայր Հայաստանը:

Ազգային Եկեղեցական Ժողովի գումարումը և Սմենյայն Հայոց կաթողիկոսի ընտրությունը այժմեական են և նշանակալից երևույթ մեր կյանքում:

Եվ քանի որ Ազգային Եկեղեցական Ժողովին է վերապահված նշված կարևոր հարցերի քննարկումն ու լուծումը, հետևաբար նրա դերը և՛ նշանակալից է, և՛ պատասխանատու:

Այս հանդամանքն ինքնին թեևաղբում է, որ պատգամավորական ընտրությունները, ինչպես Մայր Հայրենիքում, նույնպես և Սփյուռքի հայության մեջ պետք է կատարել համապատասխան լրջությամբ և ընտրել այնպիսի անձնավորություններ, որոնք կարող և ձեռնհաս լինեն լուծելու և փճուկու Ազգային Եկեղեցական Ժողովի օրակարգում դրված վերոհիշյալ ծանրակշիռ հարցերը:

Ողջունելով Ս. Էջմիածնի Ազգային Եկեղեցական Ժողովը, մաղթում ենք նրան հաջող ու բեղմնավոր աշխատանք: